ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 մարտի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

28
(3237)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՈՒՆԻ ՍԱՏՄ ՂԵԿԱՎԱՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Տիգրան Պետրոսյանի հայտարարագրային տվյալները եւ արձանագրել մի շարք անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, խոշոր չափի կանխիկ միջոցներ եւ, տարօրինակ է, վարկային պարտավորություններ:

Տիգրան Պետրոսյանը ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար է նշանակվել 2025 թվականի հուլիսի 24-ին: Մինչ այդ՝ 2024 թվականի նոյեմբերի 26-ից, աշխատել է նույն կառույցում որպես ղեկավարի տեղակալ: Ավելի վաղ նա զբաղեցրել է նաեւ պետական եւ մասնավոր հատվածի մի շարք պաշտոններ՝աշխատելով ՀՀ վարչապետի աշխատակազմում գործող ՊՈԱԿ-ներում, ինչպես նաեւ բիզնես ոլորտում:

Հայտարարագրի համաձայն՝ պաշտոնյան ունի ընդհանուր առմամբ 8 միավոր անշարժ գույք: Դրանց թվում են՝բնակարաններ Երեւանում, հողամասեր Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում, ինչպես նաեւ ավտոկայանատեղի եւ կիսակառույց շինություն: Մասնավորապես՝

- կիսակառույց շինություն Երեւանում՝ Ավան վարչական շրջանում (ձեռք է բերվել 2024 թվականին),
- երեք հողամաս Վաղարշապատում,
- բնակարան Երեւանում՝ Կենտրոն վարչական շրջանում (ձեռք է բերվել 2023 թվականին),
- ավտոկայանատեղի եւ երկու բնակարան Արաբկիր վարչական շրջանում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի ներկայացրած ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումն ուղարկվել է քննության: Այս հաղորդման առիթը մարտի 5-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած ճեպազրույցն էր, որի ընթացքում թերթի լրագրողը հարց էր ուղղել ՀՀ վարչապետին՝Նիկոլ Փաշինյանին: Լրագրողը հիշեցրել էր, որ վերջին տարիներին տարբեր քրեական գործեր վերաբացվում են՝նախկինում հնարավոր թաքցված հանցագործությունները բացահայտելու նպատակով, եւ այդ համատեքստում հետաքրքրվել էր, թե ինչու չի նախաձեռնվում վերաբացել 2017 թվականին հարուցված այն քրեական վարույթը, որը, ըստ հրապարակված տեղեկությունների, վերաբերում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանին, ում մեքենայից 2017 թվականին հայտնաբերվել էր 0.24 մգ թմրանյութ, ինչից հետո վերջինս ձերբակալվել էր: Իսկ ո՞վ էր եղել նախկին իշխանության տարիներին այն պաշտոնյան, որի միջամտությունից հետո գործը փակվել էր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը երեկ հարց ուղղեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝բանակում չծառայած պաշտոնյաների եւ նրանց հարազատների թեմայով: Շուրջ 15 տարի հրապարակումներ է անում «Ժողովուրդ»-ը բանակում չծառայած պաշտոնյաների եւ նրանց արտոնյալ որդիների մասին: Վարչապետի ուշադրությունը հրավիրեցինք եւս երկու դեպքերի վրա: Առաջինը վերաբերում է Արմեն Նիկողոսյանին, ով նախկինում աշխատել է վարչապետի ղեկավարած թերթում որպես սպորտային լրագրող, իսկ այժմ զբաղեցնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահի պաշտոնը: Լրագրողը նշեց, որ մամուլում հրապարակումներ են եղել այն մասին, թե Նիկողոսյանի որդին եւ եղբորորդին ազատվել են պարտադիր զինծառայությունից: Ըստ հրապարակումների՝որդին բանակից ազատվել է ֆուտբոլիստ լինելու հիմքով, ինչի վերաբերյալ թերթը հարցում է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն, սակայն պատասխան չի ստացել՝անձնական տվյալների պահպանման պատճառաբանությամբ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Օգնությունից հրաժարվելը հասկանալի կլիներ, եթե այն այլեւս պետք չլիներ, ասել է Զախարովան՝խոսելով ՌԴ-ից Լեռնային Ղարաբաղի բնակիչներին մարդասիրական օգնությունից Երեւանի հրաժարվելու մասին: «Մոսկվան առաջիններից էր, որ Պետություն հումանիտար օգնություն ուղարկեց՝չնայած, որ այդ ժամանակ էլ Երեւանում այդքան էլ ուրախ չէին Մոսկվայի հետ համագործակցությանը: Բանը հասավ նրան, որ պաշտոնական ալիքներով հայտարարում էին. «Շնորհակալություն, պետք չէ»: Հիմա կրկին մերժում են ընդունել Լեռնային Ղարաբաղի ժողովրդին տրվող աջակցությունը»,- նշել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը: Նա նաեւ հիշեցրել է, որ 2025 թվականի հունիսից ի վեր Ռուսաստանի մարդասիրական առաքելությունը, Եվրասիան եւ Ռոսսոտրուդնիչեստվոն մոտ 140 տոննա մարդասիրական օգնություն են մատակարարել Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակիչներին:

ԶՐՈՒՅՑ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԱԶԴԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ArmLur.am-ի զրուցակիցն է իրանցի քաղաքական մեկնաբան Փույա Հոսեյնին:

-Փետրվարի 28-ի առավոտյան Իսրայելն ԱՄՆ-ի հետ համատեղ գործողություններով սկսեց հրթիռակոծությունը Իրանի, մասնավորապես մայրաքաղաք Թեհրանի նկատմամբ: Ի՞նչ տեղեկություններ ունեք Դուք: Ի՞նչ է Ձեզ հայտնի:

-Պատերազմը ինտենսիվ շարունակվում է: Առաջին օրը, հայտնի է, որ սպանեցին Իրանի հոգեւոր եւ գերագույն առաջնորդ Այաթոլլահ Ալի Խամենեիին եւ մի քանի այլ բարձրաստիճան ռազմական պաշտոնյաների: Պետք է նշեմ, որ սպանված պաշտոնյաներին անմիջապես փոխարինեցին նոր պաշտոնյաներ: Փոխարինողները շարունակեցին իրենց գործունեությունը, եւ որեւէ խուճապ չեղավ: 12 օրվա պատերազմի ժամանակ էլ նույնը կատարվեց եւ շատ արագ, մի քանի ժամվա մեջ Իրանը կարողացավ շոկից դուրս գալ, մեջքը ուղղել եւ հակահարված տալ Իսրայելին: Նշեմ, որ Իրանի պաշտոնյաների համար այս սցենարը սպասելի էր, եւ ամեն պաշտոնյայի համար 5-7 փոխարինող է նշանակված: Իրանը այս պահին էլ ամուր է, քանի որ ինքը մի պետություն է, որը անձերից կախված չէ, եւ Իրանում ամեն ինչ իր բնական հունով է ընթանում: Այաթոլլահը միայն ռազմական եւ քաղաքական գործիչ չէր, նա 300 միլիոն շիական բնակչությունների ամբողջ աշխարհում հոգեւոր առաջնորդ է եղել, եւ շատ սխալ հաշվարկներ արեց Թրամփը:

-Այս պատերազմը ինչպե՞ս է անդրադառնում Իրանի տնտեսության վրա: Կա՞մ տնտեսական ճգնաժամում հայտնվելու վտանգ:

-Տնտեսական ճգնաժամը հիմա էլ կա պատժամիջոցների պատճառով: Դրանից էր, որ ժողովրդի մի հատվածը դժգոհ դուրս եկան փողոց. արդար իրենց բողոքպահանջը ներկայացրեցին: Այդ ամենն էլ հենց Իսրայելը հրահրեց բախումների, ագրեսիաներ, եւ տեսանք՝ ինչ ստացվեց: Հիմա էլ տնտեսությունը վատ վիճակում է: Իհարկե, պատերազմը շատ կազդի տնտեսության վրա, բայց պատմությունը ցույց է տվել, որ Իրանում, երբ ծանր իրավիճակ է ստեղծվում, ժողովուրդը միավորվում է:

-Իրան-Իսրայել եւ ԱՄՆ հակամարտությունը ինչպես է անդրադառնալու տարածաշրջանի վրա, հատկապես Հայաստանի: Ի՞նչ ռիսկեր եք այստեղ նկատում:

-Տեսեք, Հայաստանը համ շատ լավ հարաբերություններ ունի Իրանի հետ, համ ԱՄՆ-ի հետ: Ռազմավարական համագործակցություն է սկսել ԱՄՆ-ի հետ, շուտով էլ նման մի համագործակցությունը կհաստատի Իրանի հետ: Հիմա տեսնում եք, ինչ մակարդակի թշնամանք կա երկու երկրների՝ Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ, այստեղ Հայաստանը շատ զգույշ պետք է գործի, քանի որ ինքը երկուսի հետ էլ լավ հարաբերություններ է ստեղծում, իսկ թշնամական երկրների միջեւ գտնվելը շատ բարդ է, շատ դժվար է, վտանգավոր է: Դու պետք է կարողանաս բալանսավորել դրանց շահերը: Այդ ուժային բալանսավորումը շատ դժվար ու բարդ կլինի: Մի փոքր սխալ Հայաստանի կողմից՝ կարող է ամեն ինչ այլ կերպ դառնա: Ուստի պետք է շատ զգույշ ու զուսպ լինել: Հայաստանը ուզում է իրականացնել TRIPP ճանապարհը, իսկ Իրանը պարզ չի, թե ինչ դիրքորոշում կհայտնի այդ ճանապարհի վերաբերյալ: Հնարավոր է, Իրանը չկարողանա հանդուրժել այդ ճանապարհը Իրանի սահմանների մոտ: Ինչքան էլ Հայաստանը վստահեցնի, որ այդ ճանապարհը Իրանի դեմ չի օգտագործվելու, ինչքան էլ Հայաստանը Իրանի համար բարեկամ երկիր լինի, այնուամենայնիվ, այդ թշնամանքի իրավիճակում Իրանը կարող է շատ ավելի կոշտ դիրքորոշում որդեգրել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԻՆՉՔԱՄՆ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ

ArmLur.am-ը հարց է ուղղել ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդուն՝ թալանից ինչքա՞ն են վերադարձնելու: Հարցին ի պատասխան՝ Գագիկ Խաչատրյանի որդին նշել է դիմեք իրավական թիմին, իրենք կպատասխանեն:

Հիշեցնենք, որ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով 2008 թվականի ապրիլի 15-ից մինչեւ հունիսի 4-ը ՀՀ կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատարի, այնուհետեւ 2008 թվականի հունիսի 4-ից մինչեւ օգոստոսի 20-ը՝նշված կոմիտեի նախագահի, 2008 թվականի օգոստոսի 20-ից մինչեւ 2014 թվականի ապրիլի 26-ը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի, այնուհետեւ՝ 2014 թվականի ապրիլի 26-ից մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 8-ը ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնները զբաղեցրած Գագիկ Խաչատրյանի որդին, եղբոր՝ Գուրգեն Խաչատրյանի եւ ազգական Արամ Խաչատրյանի հետ նախնական համաձայնությամբ, հոր կողմից զբաղեցրած պաշտոնական դիրքով պայմանավորված, ՀՀ հարկային եւ մաքսային մարմիններին ապրանքներ մատակարարելու եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայություններ մատուցելու նպատակով Ալեքսանդր Եսայանի մասնակցությամբ հիմնադրել են «Այյունեթվորքս» ՍՊ ընկերությունը:

Ընկերության գրանցման փաստաթղթերում, որպես 40 տոկոս բաժնեմասի սեփականատեր, նշվել է Ալեքսանդր Եսայանը, իսկ Գուրգեն, Արտյոմ եւ Արամ Խաչատրյանների 60 տոկոս բաժնեմասը գրանցվել է վերջիններիս ազգական Հայկ Խաչատրյանի անվամբ:

2008-2016 թթ. ընկած ժամանակահատվածում Գագիկ Խաչատրյանը, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, իր եւ եղբոր որդիներին պատկանող առեւտրային կազմակերպության տնտեսական գործունեությանն ապօրինի նպաստելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, հանձնարարել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, այնուհետեւ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնատար անձանց համագործակցել «Այյունեթվորքս» ՍՊ ընկերության ծառայողների հետ, հնարավորինս աջակցել վերջիններիս՝ ՀՀ ՊԵԿ-ի եւ ՀՀ ՖՆ կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գնումների ընթացակարգերին պատշաճ մասնակցությունն ապահովելու, տրամադրել դրա համար անհրաժեշտ տեղեկատվություն, վերացնել առաջացող խոչընդոտները եւ կիրառել առավել բարենպաստ գնման ընթացակարգեր:

Օգտվելով Գագիկ Խաչատրյանի կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու արդյունքում ապօրինի կերպով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ «Այյունեթվորքս» ՍՊ ընկերության ծառայողները ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ 2008-2020 թվականների ընթացքում կնքել են ապրանքների մատակարարման եւ ծառայությունների մատուցման բազմաթիվ պայմանագրեր՝ ընդհանուր 4.426.435.781 ՀՀ դրամ արժեքով:

Կնքված պայմանագրերի համաձայն՝ նշված ժամանակահատվածում «Այյունեթվորքս» ՍՊ ընկերությանը փոխանցվել է ընդհանուր 4.088.828.371 ՀՀ դրամ գումար:

ՀՀ հարկային եւ մաքսային մարմիններին ապրանքներ մատակարարելու եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայություններ մատուցելու նպատակով «Այյունեթվորքս» ՍՊ ընկերությունը հիմնադրելով եւ Գագիկ Խաչատրյանի կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու արդյունքում ապօրինի կերպով ստեղծված բարենպաստ պայմաններից օգտվելով՝ պետական մարմինների հետ ապրանքների մատակարարման եւ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելով՝ ինչպես Արտյոմ Խաչատրյանը, այնպես էլ Գուրգեն եւ Արամ Խաչատրյանները օժանդակել են Գագիկ Խաչատրյանին չարաշահել պաշտոնեական լիազորությունները, որն առաջացրել է ծանր հետեւանքներ:

Վերջիններիս գործողությունների հետեւանքով խարխլվել է պետական մարմինների հեղինակությունը, խաթարվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եւ ՀՀ ֆինանսների նախարարության բնականոն գործունեությունը, գնումների բնականոն գործընթացը, խախտվել են գնման գործընթացին մասնակցող կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԲԱՐԵԼԱՎԻ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղությունը կբարելավի տարածաշրջանի տնտեսական զարգացումը, կբերի կայունություն եւ անվտանգություն: Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտարարել է Եվրոպական խորհրդի նախկին նախագահ Շարլ Միշելը:

Նա ընդգծել է, որ խաղաղության համաձայնագրի վերաբերյալ որոշման կայացումը եղել է ծայրահեղ համարձակ քայլ:

«Ես վճռականորեն աջակցում եմ բոլոր այն ջանքերին, որոնք ձեռնարկվում են այս խաղաղության համաձայնագրի ամրապնդման համար: Համոզված եմ, որ այն շատ ամուր հիմք կդառնա տարածաշրջանում կապերի զարգացման համար եւ կխթանի տնտեսական աճը: Միեւնույն ժամանակ, մեծ կայունության ու անվտանգության շնորհիվ, այն կբարձրացնի մարդկանց բարեկեցությունը եւ հնարավորություններ կստեղծի տարբեր նախագծերի իրականացման համար»,- նշել է Միշելը:

ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԵՄ ներքին գործերի եւ միգրացիայի հարցերով հանձնակատար Մագնուս Բրունների: Վարչապետը ողջունել է պարոն Բրունների այցը Հայաստան եւ կարեւորել Եվրոպական միության հետ համագործակցության հետեւողական զարգացումը: Վարչապետն ընդգծել է մեր երկրում ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ իրականացման գործում ԵՄ շարունակական օժանդակության փաստը՝ հավելելով, որ ՀՀ Կառավարության նպատակն է տարբեր ոլորտներում ներդնել այնպիսի ստանդարտներ, որոնք կհամապատասխանեն ԵՄ չափանիշներին: Երկրի ղեկավարը միաժամանակ գոհունակություն է հայտնել ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներից եւ հավելել, որ վիզաների ազատականացումը եւս մեկ կարեւոր քայլ կլինի երկկողմ հարաբերությունների խորացման եւ ընդլայնման ուղղությամբ:

Իր հերթին, Մագնուս Բրունները շեշտել է, որ Հայաստանը վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրն իրականացնում է հաջողությամբ եւ արդյունավետ՝ հույս հայտնելով, որ Հայաստանի հետեւողական քայլերը կհանգեցնեն սպասված վերջնարդյունքին: Միաժամանակ, ԵՄ ներքին գործերի եւ միգրացիայի հարցերով հանձնակատարը եւս մեկ անգամ ընդգծել է բարեփոխումների առաջմղման նպատակով ԵՄ-ի կողմից աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել ՀՀ-ԵՄ փոխգործակցության օրակարգային հարցերին, ինչպես նաեւ անդրադարձ կատարել տարածաշրջանային նշանակության այլ թեմաների:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հայտարարել է այն պայմանները, որոնց դեպքում հնարավոր կլինի ավարտել Իրանի դեմ ընթացող պատերազմը՝ նշելով, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը շարունակում են օդային հարվածներ հասցնել երկրի կենսական ենթակառուցվածքներին, խաղաղ բնակչությանը եւ պատմական հուշարձաններին:

Փեզեշքիանը այս մասին գրել է իր X սոցիալական ցանցի էջում չորեքշաբթի ուշ երեկոյան կատարած գրառման մեջ: Նա նշել է, որ Ռուսաստանի եւ Պակիստանի ղեկավարների հետ հեռախոսազրույցների ընթացքում վերահաստատել է Իրանի հանձնառությունը տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

«Այս պատերազմը, որը հրահրվել է սիոնիստական ռեժիմի եւ ԱՄՆ-ի կողմից, ավարտելու միակ ճանապարհը Իրանի օրինական իրավունքների ճանաչումն է, փոխհատուցումների վճարումը եւ ապագա հնարավոր ագրեսիաներից պաշտպանվելու հստակ միջազգային երաշխիքների տրամադրումը», -գրել է Իրանի նախագահը:

Փեզեշքիանը այս հայտարարությունը հրապարակել է այն բանից հետո, երբ առանձին հեռախոսազրույցներ է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Պակիստանի վարչապետ Շահբազ Շարիֆի հետ:

Նշվում է, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը փետրվարի 28-ին սկսել են ռազմական գործողություններ Իրանի դեմ, որոնց հետեւանքով զոհվել են Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեին, բարձրաստիճան զինվորականներ եւ խաղաղ բնակիչներ:

ԻՐԱՆԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԴԱԴԱՐԵՑՆԵԼ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը բանաձեւ է ընդունել, որով պահանջում է Իրանից անհապաղ դադարեցնել մի քանի արաբական պետությունների վրա հարձակումները: Փաստաթղթում թվարկված են Պարսից ծոցի եւ Մերձավոր Արեւելքի մի քանի երկրներ, որոնք թիրախավորվել են Իրանի կողմից, սակայն չեն նշվում ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողությունները:

«Ընդունված բանաձեւը դատապարտում է Իրանի կողմից Բահրեյնի, Քուվեյթի, Օմանի, Քաթարի, Սաուդյան Արաբիայի, Միացյալ Արաբական Էմիրությունների եւ Հորդանանի թիրախներին հարվածները եւ պահանջում է դրանց անհապաղ դադարեցում: Բանաձեւում չի նշվում ագրեսորների՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի մասին, ինչպես նաեւ կոչ չի արվում այս երկու երկրներին դադարեցնել Իրանի դեմ հարձակումները»,-հայտնում է Ռիա Նովոստին:

Բանաձեւը ստացել է 13 պետության աջակցությունը, մինչդեռ Ռուսաստանը եւ Չինաստանը չեն աջակցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Իրանի նկատմամբ պահանջներին:

ԶՊՄԿ

ԱՐՁԱԳԱՆՔ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

«Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը օրեր առաջ շուրջ երկու ժամ տեւած հարցազրույցում անդրադարձել է մի շարք հարցերի՝ քաղաքական, տնտեսական եւ աշխարհաքաղաքական: Քննարկվող թեմաների շրջանակում Արամ Սարգսյանը խոսել է հանքարդյունաբերության ոլորտից՝ մասնավորապես հիշատակելով Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ ցույցերը: Անդրադարձել է նաեւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությանը, Արծվանիկի պոչամբարին եւ հանքի ընդլայնման հնարավորություններին:

Խոսելով Ամուլսարի շահագործման դեմ կազմակերպված ցույցերից՝ Արամ Սարգսյանը նշել է. «Ամուլսարի այդ ճանապարհները փակողներին վճարում էր եւ էդտեղ էր ուղարկում Քաջարանի կոմբինատը: Էս մասին էլ են թերթերը գրել բազմաթիվ անգամներ, լուսանկարել են մեքենաները»:

Սարգսյանը սա ներկայացնում է որպես «ռուսական կապիտալի» պայքար ընդդեմ «արեւմտյանի»՝ պնդելով, որ «ռուսները» ասում են՝ «Թեղուտը, Քաջարանը, Ագարակը, Ղափանը մերն է, ինչու պիտի Ամուլսարը կանադական լինի», եւ ինքը հենց դրա համար էր պայքարում:

«Ամուլսարի բնապահպանական էդ խնդիրներն ինչի՞ էի ես համարում իրենց ռուսական: Շատ պարզ, որովհետեւ, գիտե՞ք ինչ, կա Սոթքը, որը ոսկի է ստանում Արարատում, կա Քաջարանը, որի դամբան (նկատի ունի պոչամբարը) ահռելի խնդիրներ ունի, էլ չեմ խոսում Ագարակի դամբայի մասին, որովհետեւ էդ մասին արդեն պարսկական կողմը քանի անգամ զգուշացրել է Արաքսի մասով: Էս մարդիկ աշխատում են, ինչ ասեմ, 1960-ական թվականների տեխնոլոգիաներով»:

Շարունակելով թեման՝ Արամ Սարգսյանը բերել է Ադրբեջանի օրինակը, թե ինչպես էր նավթի արդյունահանումից էկոլոգիական վնաս կրում Կասպից ծովը, եւ նշել է. «Ադրբեջանը իր նավթային ռեսուրսների կառավարման՝ նավթային ու գազային ռեսուրսների կառավարման 92 թե 93 տոկոսը տվեց բրիտանական էդ ընկերությանը (BP): Արդյունքում ինքը սկսեց թե՛ էկոլոգիայի առումով ավելի մաքուր պահել Կասպիցը, եւ թե՛ շատ մեծ շահույթներ ունենալ, որովհետեւ էդ ընկերությունը չէր գողանում, հասկանո՞ւմ եք՝ի տարբերություն այ էդ ռուսական ընկերությունների, որոնք Ամուլսար, չգիտեմ, էկոլոգների էին վճարում, որ այն չաշխատի, որովհետեւ տրամաբանությունը գիտե՞ք ինչումն է... Ես ռուսների թշնամի չեմ, ես ուզում եմ ռուսները մրցակցություն ունենան, որ նրանց ցույց տամ՝ էկոլոգիականն ինչ է, որ նրանց ասեմ՝ այսքան տարի Քաջարանում եք, դուք դեռ Քաջարանի Սովետական Միության բացած հանքավայրն եք օգտագործում, դուք ձախ ափ անգամ չեք գնացել, դուք գետի հունի մասին ընդհանրապես չեք մտածել: Էդ Քաջարանը մեկ միլիոն տոննա կոնցենտրատ կարող է արտադրել, էսօր ինքն արտադրում է 240-ից 250 հազար տոննա»:

Առաջին անգամ չէ, որ Արամ Սարգսյանը նման որակումներ է տալիս: Հարկ է նշել, որ ԶՊՄԿ-ում սեփականատիրական փոփոխությունը տեղի է ունեցել 2021-ին, այսինքն՝ Ամուլսարի դեմ ակտիվ պայքարից տարիներ անց: Իսկ այն օրերին, երբ Արամ Սարգսյանի պնդմամբ ԶՊՄԿ-ն ֆինանսավորում էր Ամուլսարի դեմ պայքարը, ԶՊՄԿ-ի խոշոր սեփականատերը արեւմտյան, մասնավորապես գերմանական ընկերություն էր: Միտումնավո՞ր է պարոն Սարգսյանը աղավաղում փաստերը, թե՞ պարզապես լավ չի հիշում:

Վերը նշված պնդումների վերաբերյալ պարզաբանում ենք խնդրել ԶՊՄԿ-ից: Ընկերությունը պաշտոնական պատասխան չտրամադրեց, սակայն մեր հարցերին ընդհանուր շեշտադրումներով պատասխանեց լրատվության եւ հանրության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանը. «Չէի ցանկանա մեկնաբանել քաղաքական հայտարարությունները կամ աշխարհաքաղաքական գնահատականները, բայց կոնկրետ այս դեպքում կան ԶՊՄԿ-ի վերաբերյալ բազմաթիվ փաստական սխալներ, որոնց կարճ կանդրադառնամ: Մասնավորապես, այն ժամանակաշրջանում, որը նշում է Արամ Սարգսյանը՝Ամուլսարի դեմ գործընթացների համատեքստում, իր կողմից որպես «ռուսական» ներկայացվող հանքերից մեկն իրականում բրիտանական էր, մյուսը՝ հայկական, իսկ կոնկրետ ԶՊՄԿ-ի հիմնական բաժնեմասը պատկանում էր գերմանական ընկերությանը: Այսքանը միայն բավարար է հասկանալու համար, թե որքանով են հիմնավոր ԶՊՄԿ-ի մասին հնչած մյուս գնահատականները:

Կարծում եմ, որ Հայաստանի տնտեսության կարեւոր օղակները չարժե շահարկել քաղաքական նպատակներով: Ներկայիս, որ ԶՊՄԿ-ն ահռելի առաջընթաց է արձանագրել հատկապես վերջին տարիներին՝ բնապահպանական կառավարման ոլորտում: Սկսած թեկուզ այն փաստից, որ Հայաստանում միակ ընկերությունն է, որը միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան, միջազգային լավագույն խորհրդատվական կազմակերպությունների մասնակցությամբ արդեն չորրորդ տարին անընդմեջ հրապարակում է կայուն զարգացման զեկույց: Կարելի էր առնվազն ծանոթանալ այդ զեկույցներին եւ տեղեկանալ այն բազմաշերտ բարեփոխումներին, այդ թվում՝ բնապահպանական եւ կառավարչական ոլորտներում, որոնք իրականացվել են այս տարիներին:

Ընկերության ընդլայնման եւ արդիականացման ծրագրի մասին նույնպես հրապարակային խոսվել է: Հենց հիմա ընդլայնման բնապահպանական եւ սոցիալական ազդեցության բազմակողմ ուսումնասիրությունն իրականացնում է անգլիական ընկերություն, որը ոլորտի լավագույն խորհրդատվական կազմակերպություններից մեկն է: Արծվանիկի պոչամբարի ամբարտակի կայունության եւ կառավարման բարեփոխումների ծրագիրն արդեն մի քանի տարի իրականացվում է մեկ այլ հանրաճանաչ միջազգային մասնագիտական ընկերության մասնակցությամբ, որին նույնպես ներգրավել է ԶՊՄԿ ներկայիս ղեկավարությունը:

Սա զուտ՝ որպես տեղեկատվություն: Այս եւ բազմաթիվ այլ տեղեկություններ հասանելի են առավել քան թափանցիկ աշխատող մեր ընկերության գործունեությանը իսկապես հետեւող բոլորի համար: ԶՊՄԿ-ն հայաստանյան ընկերություն է՝ՀՀ կառավարության մասնակցությամբ, եւ ամենայն պատասխանատվությամբ կարող ենք պնդել, որ վերջին տարիներին այն ԲՍԿ բարեփոխումների առումով առաջատար ընկերություններից է ոչ միայն Հայաստանում, այլեւ ոլորտային ընկերությունների շրջանում՝ տարածաշրջանում:

Հանքարդյունաբերությունը բազմաշերտ, բարդ եւ լուրջ ոլորտ է մակերեսային վերլուծությունների համար: Ոլորտի ցանկացած ընկերության մասին խոսելիս, անկախ քաղաքական նպատակներից, լավ կլինի հենվել միայն ճշգրիտ տեղեկատվության վրա: Ի դեպ, իմ համոզմամբ, Ամուլսարի շուրջ խնդիրները հենց նման անտեղյակ դատողությունների հետեւանք էին»:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ լրատվության եւ հասարակության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյան

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

«Ես որոշում եմ կայացրել իմ համեստ կարողություններով մասնակցել ուժեղ առաջնորդի, ուժեղ թիմի նախաձեռնած մի գաղափարին, որը միտված է կերտելու ուժեղ Հայաստան»: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում տեսանյութ է հրապարակել Էդգար Ղազարյանը. «Ես որեւէ պայմանավորվածություն, նախապայման եւ այլ խնդիր իմ առջեւ չեմ դրել, քան օգտակար լինել էլ ուժեղ Հայաստան ստեղծելու գաղափարին: Սամվել Կարապետյանը կարիք եւ անհրաժեշտություն չունի ինձ հիմնավորելու, որ ինքը կարող է իր ողջ կարողություններով, նվիրումով եւ մտածողությամբ ծառայել մեր պետությանը եւ ժողովրդին: Նա վաղուց է ցույց տվել, որ կարող է ոչնչից ստեղծել մեծ բարիքներ: Նա վաղուց է ցույց տվել, որ կարող է իր ստեղծած բարիքները անշահախնդրորեն կիսել իր ժողովրդի հետ, մասնակից դարձնել հազարավոր մարդկանց բարիքների ստեղծման գործընթացին, ուժեղանալ եւ ուժեղացնել ուրիշներին...»:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ Է

«Մենք չենք կարող նման զգայուն թեմայի հանդեպ չցուցաբերել հետեւողականություն. սա վերաբերվում է մեր անկախությանը, ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, եւ մենք բոլորով այստեղ քաղաքական պատկանելիության խնդիրը պետք է դնենք մի կողմ»: Այս մասին մարտի 12-ին՝կառավարության դիմաց բողոքի ակցիայի ժամանակ, նշեց «Շանթ» դաշինքի ղեկավար Շահեն Հարությունյանը:

«Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնությունը ակցիա է իրականացրել կառավարության դիմաց: Նրանք Կառավարությանը կփոխանցեն հիմնավորված փաստաթուղթ, որը վերաբերում է ՀՀ ինքնիշխան տարածքում 2025 թվականին Ադրբեջանի կողմից իրականացված նոր ներխուժումներին, դիրքային բարելավումներին եւ ամրացման աշխատանքներին: Փաստաթուղթը ներառում է նաեւ կոորդինատային տվյալներ:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ՝ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱՊՈՌԻՆ

ԿԳՄՍ պաշտոնյաներ Տիգրան Գալստյանը եւ Լեւոն Ֆարմանյանը հայտնվել են մեղադրյալի աթոռին:

Տիգրան Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2008 թվականի սեպտեմբերի 2-ից զբաղեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Բարձրագույն կրթության եւ գիտության» կոմիտեի ֆինանսատնտեսագիտական հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պաշտոնն ու օժտված լինելով Կոմիտեի ֆինանսական միջոցները տնօրինելու, պետության կողմից ստեղված հիմնարկի, այն է՝ Կոմիտեի անունից իրավունք, պարտականություն եւ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ կատարելու լիազորությամբ, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, կազմած վճարման հանձնարարականների նպատակ դաշտերում կեղծ տվյալներ մտցնելով, խաբեության եւ Կոմիտեի գլխավոր քարտուղարների վստահությունը չարաշահելու եղանակով, հափշտակություն կատարելու իրական մտադրության մասին լռելով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Կոմիտեին փոխանցված դրամական միջոցներից հափշտակել է առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներ, ինչպես նաեւ օգտագործել է կեղծ փաստաթղթեր, որպիսի հակաօրինական գործողությունները դրսեւորվել են հետեւյալում.

Տիգրան Հովհաննեսի Գալստյանը, 2008 թվականի սեպտեմբերի 2-ից զբաղեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Բարձրագույն կրթության եւ գիտության» կոմիտեի ֆինանսատնտեսագիտական եւ հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պաշտոնն ու օժտված լինելով նախարարության անունից իրավունք, պարտականություն եւ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ կատարելու լիազորությամբ, հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշման հավելվածով սահմանված բյուջեների կատարման կարգի 87-րդ կետի՝ գանձապետական ծախսային հաշիվների դրամարկղերում առկա մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին բյուջեի միջոցների տարեվերջի ազատ մնացորդի հաշվառման համար գործող գանձապետական հաշվին փոխանցելու պարտականության խախտմամբ, «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» 1162-11002 փոցառման շրջանակներում գիտական կազմակերպությունների կողմից տարեկան ֆինանսավորումների արդյունքում չօգտագործված (տնտեսված) միջոցներից Կոմիտեի 90011033033 հաշվին 2019 թվականից մինչեւ 2024 թվականը «7777 Բանկերից վերադարձված գումարներ» վերադարձված 210,946,800 ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետության բյուջե փոխանցելու փոխարեն, նույն ժամանակահատվածում, ինչպես նշված, այնպես էլ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639» տնտեսագիտական հոդվածներից եւ Կոմիտեի ֆինանսական գործունեության իրականացման համար նախատեսված գանձապետական այլ հաշիվներից, խաբեության վստահությունը չարաշահելու, կեղծ նպատակ դաշտերով վճարման հանձնարարագրեր կոմիտեի գլխավոր քարտուղարների հաստատմանը ներկայացնելու եղանակով ընդհանուր 212,106,000 ՀՀ դրամ փոխանցել է իր անվամբ ՀՀ առեւտրային, տարբեր Բանկերում բացված հաշվեհամարներին, որից հափշտակել է 187.506,457 ՀՀ դրամ:

Լեւոն Ռոբերտի Ֆարմանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2021 թվականի սեպտեմբերի 17-ից զբաղեցնելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի, իսկ 2023 թվականի օգոստոսից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Բարձրագույն կրթություն եւ գիտություն» կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնն ու օժտված լինելով Կոմիտեի անունից իրավունք, պարտականություն եւ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ կատարելու լիազորությամբ, հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-L հրամանով հաստատված Կոմիտեի կանոնադրության 7-րդ գլխի 40-րդ կետի դրույթների ուժով օժտված լինելով «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորություններով, ինչպես նաեւ պատասխանատու լինելով Կոմիտեի ֆինանսական գործառնությունների իրականացման համար, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով ոչ պատշաճ է կատարել ծառայողական պարտականությունները, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ «Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի պաշտոնատար անձինք, քաղաքացու օգտին ապօրինի գործողություն կատարելու եւ անգործություն դրսեւորելու համար, իրենց ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, խմբի կազմում կաշառք են ստացել:

Նախաքննությամբ պարզվել է, որ քաղաքացին, քոլեջի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալից նախապես տեղեկանալով, որ իր որդին պետական քննությունը ձախողել է, նախնական պայմանավորվածության համաձայն՝ նշված գործընթացում որդուն օգնելու՝ դրական գնահատական նշանակելու համար քոլեջի տնօրենին եւ տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալին տվել է 500 ԱՄՆ դոլար կաշառք:

Բացի այդ, նախաքննության ընթացքում բացահայտվել է նաեւ հիշյալ քաղաքացու կողմից որդու օգտին ապօրինի գործողություն կատարելու մեկ այլ դեպք: Մասնավորապես, վարորդական իրավունքի վկայական ձեռք բերելու համար վերջինս 2025 թվականին դիմել է Երեւանի բնակչին, ով վստահեցրել է, որ իրավասու պաշտոնատար անձին 400.000 ՀՀ դրամ կաշառք տալու եղանակով կարող է կազմակերպել նշված գործընթացը, ինչին քաղաքացին համաձայնել է:

Արդյունքում՝ կաշառքի միջնորդության պատրվակով գումար ստացած անձը կաշառքի գումարն օգտագործել է անձնական կարիքների համար, իսկ քաղաքացին, իր կամքից անկախ հանգամանքներով, չի կարողացել հանցագործությունը՝ կաշառք տալն ավարտին հասցնել:

Խմբի կազմում կաշառք ստանալու համար «Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենին եւ նրա տեղակալին մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով: Կաշառք տված քաղաքացուն մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 44-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳԱԶԱՅԻՆ ԶԵՆՔ

Լիանա Ռոբերտի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի կերպով կրել է գազային զենք: Լիանա Ռոբերտի Հարությունյանը, չունենալով «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված գազային զենք կրելու իրավունք /թույլտվություն/, 2026թ. հունվարի 1-ին Երեւան քաղաքի Ազատամարտիկների 124-րդ հասցեի մոտակայքում ապօրինի կրել է 9 մմ տրամաչափի «Ռ1\/1Ռ» մոդելի, 2333500040 համարի գործարանային արտադրության գազային զենք, որով նույն վայրում կրակոցներ է արձակել, որից հետո համացանցի տարբեր սոցիալական հարթակներում հրապարակել իր կողմից նշված զենքը կրելու եւ դրանով կրակոցներ արձակելու մասին տեսանյութը:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալը, մարտի 10-ին՝ ժամը 13:05-ին, ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով Վրացական փողոցում ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Նոր Նորքի 4-րդ զանգվածի բնակիչ 30-ամյա տղամարդու: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է բուսական զանգվածով ութ փաթեթ:

Ըստ երիտասարդի՝ հայտնաբերվածը մարիխուանա է, ձեռք է բերել «Տելեգրամ» հավելվածի միջոցով, իսկ փաթեթներից մեկն էլ անձնական օգտագործման համար էր:

Երիտասարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

ԱՊՕՐԻՆԻ ՈՐՍ

Ոստիկանությունը մշտապես միջոցներ է ձեռնարկում ապօրինի որսը կանխելու ուղղությամբ, իսկ այս օրերին հատկապես խոցելի են տափաստանային արտույտները, որոնց որսն արգելված է: Մարտի 10-ի առավոտյան Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները Սարդարապատ գյուղի դաշտերում նկատել են որս հավաքող մի քաղաքացու: Նույն գյուղի բնակիչ 50-ամյա տղամարդը հայտնել է, որ իրեն պատկանող «Օպելում» նստած, իրեն պատկանող որսորդական երկփողանի ողորկափող հրացանով մոտ 15 րոպե առաջ որսացել է տափաստանային 36 արտույտ: Մեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք, հրացանը փաթեթավորվել ու կնիքվել է:

Նույն օրը նույն բաժնի ծառայողները նման մի դեպք են արձանագրել Արգավանդ-Արազափ ավտոճանապարհին: Ժամը 17:30-ի սահմաններում համայնքային ոստիկանները նկատել են երկու հոգու, որոնք որս են հավաքել դաշտում: Էջմիածնի բնակիչ 38-ամյա եւ 32-ամյա տղամարդիկ հայտնել են, որ ավտոճանապարհի հարակից դաշտեր են եկել «Միցուբիշի» մակնիշի մեքենայով եւ որսորդական հրացաններով որսացել տափաստանային 19 արտույտ: Հրացանները փաթեթավորվել ու կնիքվել են:

Երկու դեպքով էլ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արմավիրի մարզային քննչական վարչություն:

● *Մարտի 10-ից 11-ը ՀՀ-ում բացահայտվել է 126 հանցագործություն, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՎ Է ԿԱՌՈՒՑՈՒՄ

Իջեւան համայնքի Խաշթառակ եւ Լուսահովիտ գյուղեր տանող ավտոճանապարհի կամուրջը շարքից դուրս եկավ 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղի հետեւանքով: Այժմ այդ գյուղերի բնակիչներն օգտվում են Հայաստան-Վրաստան միջպետական մայրուղուց դեպի Խաշթառակ գյուղ տանող ճանապարհին կառուցված ժամանակավոր կամրջից: Փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե որ կազմակերպությունն է կառուցում Խաշթառակի նոր կամուրջը, որքան է ծրագրի արժեքը, երբ է այն շահագործման հանձնվելու: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ Խաշթառակի կամրջի կառուցման պատվիրատուն հանդիսանում է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին մարտի 5-ին հարցում եմ արել. «Ե՞րբ է սկսվել Խաշթառակ գյուղի հիմնական կամրջի կառուցումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում, ո՞վ է աշխատանքների պատվիրատուն, որքա՞ն գումար է նախատեսված ծրագրով, ի սկզբանե ե՞րբ էր նախատեսված ծրագրի ավարտը, ե՞րբ այն կավարտվի»: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Տեղեկացնում ենք, որ S-10-26, /Մ4/-Խաշթառակ-Լուսահովիտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+050-ում գտնվող փլուզված կամրջի փոխարեն կառուցվում է պողպատե ֆերմաներով նոր մետաղական կամուրջ: Աշխատանքները մեկնարկել են 2025 թվականին: Կառուցող ընկերությունը «Թունել Սադ Արիանան» է: Ավարտը նախատեսվում է 2026 թվականի մայիսին: Պատվիրատուն ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն է»: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը չի պատասխանել այն հարցիս, թե որքան գումար է նախատեսված այդ ծրագրով: Հավելեմ, որ «Թունել Սադ Արիանա» ՓԲԸ-ն իրանական շինարարական ընկերություն է, որը հիմնականում զբաղվում է ենթակառուցվածքային խոշոր նախագծերով, այդ թվում՝ ճանապարհների, թունելների եւ հիդրոտեխնիկական կառույցների շինարարությամբ:

ՓՈՔՐ ՑՈՒՑԱՆԻՇ

Տավուշի մարզպետի աշխատակազմից հայտնել են, որ 2025 թվականին Տավուշի մարզում կատարվել է 2013,04 հեկտար աշնանացան, այդ թվում՝ Բերդ համայնքում՝ 880,44 հեկտար,Նոյեմբերյան համայնքում՝ 747,8 հեկտար, Իջեւան համայնքում՝ 384,7 հեկտար: Ավանդաբար Դիլիջան համայնքում աշնանացան ցորեն չեն ցանում: Տավուշի մարզում 2 հազար հեկտար աշնանացանը շատ փոքր ցուցանիշ է, մանավանդ, որ գործում է աշնանացան ցորենի մշակության խթանման պետական ծրագիր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՆԵՑՎԱԾՔ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՆՈՐ ՏՈՒՆ, ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, որը պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի դեկտեմբերի 13-ից, ըստ հայտարարագրային տվյալների՝ ունի մի քանի անշարժ գույք, բանկային միջոցներ եւ վարկային պարտավորություններ:

ArmLur.am-ը ուսումնասիրեց պաշտոնյայի հայտարարագրային տվյալները եւ պարզեց, որ նա ունի երեք միավոր անշարժ գույք Հայաստանում եւ արտերկրում:

Քոչարյանը 2024 թվականին ձեռք է բերել Երեւանում գտնվող անհատական բնակելի տուն: Բացի այդ, նա ունի բնակարան Իսպանիայում՝ 50 տոկոս բաժնային սեփականությամբ, ինչպես նաեւ ժառանգությամբ ստացած բնակարան Երեւանի Կենտրոն վարչական շրջանում:

Անշարժ գույք

• Անհատական բնակելի տուն՝ հողամասի վրա կառուցված, համատեղ սեփականություն, Երեւան - ձեռքբերում՝ 08.02.2024, գնում

• Բնակարան՝ 50% բաժնային սեփականություն, Իսպանիա - ձեռքբերում՝ 01.06.2012, գնում

• Բնակարան՝ համատեղ սեփականություն, Երեւան, Կենտրոն - ձեռքբերում՝ 01.01.1991, ժառանգություն

Տրանսպորտային միջոցներ

• Մեքենա չի հայտարարագրել

Բանկային միջոցներ

• Բանկային հաշիվների մնացորդ՝ 4,899,433 դրամ

• Կանխիկ գումար՝ 600 եվրո

2024 թվականի եկամուտներ

• Եկամտային հարկի վերադարձ՝ 2,253,150 դրամ

• Աշխատավարձ՝ ԿԳՄՍ նախարարությունից՝ 15,188,434 դրամ

• Ընդհանուր եկամուտ՝ 17,441,584 դրամ

Վարկային պարտավորություններ

• Բնակելի տան վարկի մայր գումարի մնացորդ՝ 43,602,005 դրամ

Ծախսեր

• Հանգստի համար ճանապարհածախս եւ կեցություն՝ 2,000,000 դրամ

• Վարկի մարմանն ուղղված վճարումներ՝ 5,149,317 դրամ

• Անշարժ գույքի վերանորոգում՝ 3,000,000 դրամ

• Այլ խոշոր միանվագ ծախսեր՝ 11,000,000 դրամ

Գործարար մասնակցություն

• «Աննա Կլեկչյան» ԱՁ-ում մասնակցություն՝ 100% (սկսած 10.01.2020-ից)

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼ Է

Մարտի 12-ին ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանն ընդունել է ԵՄ ներքին գործերի եւ միգրացիայի հարցերով հանձնակատար Մագնուս Բրուններին:

Ողջունելով հյուրին՝ Արփինե Սարգսյանը նշել է, որ առաջին անգամ է, երբ ԵՄ ներքին գործերի եւ միգրացիայի հանձնակատար է այցելում Հայաստան, ինչն ընդգծում է երկկողմ համագործակցությունն ու արձանագրված առաջընթացը գնահատելու կարեւորությունը:

ՆԳ նախարարը՝ որպես ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործընթացում հայկական կողմի գլխավոր բանակցող, հավաստիացրել է, որ Հայաստանի կառավարությունը լիովին հանձնառու է իրականացնել վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (VLAP) ողջ ծավալով, ինչը միանգամայն համահունչ է ՀՀ կառավարության ոլորտային բարեփոխումների օրակարգին: Նրա խոսքով՝ արդեն իսկ իրականացման տարբեր փուլերում են ծրագրով նախատեսված՝ ինչպես միգրացիայի եւ սահմանների կառավարման, այնպես էլ իրավապահ մարմինների եւ արդարադատության ուղղություններով աշխատանքները: Ընդգծվել է նաեւ, որ երկխոսության մեկնարկից ի վեր Հայաստանը համադրելի երկրների համեմատ տպավորիչ կարճ ժամկետում ստացել է Գործողությունների ծրագիրը. անմիջապես հաջորդել է ՆԳ նախարարության համակարգմամբ իրավասու գերատեսչությունների ջանքերի մեկտեղումը թիրախային եւ ժամանակին արդյունքներ գրանցելու նպատակով:

Հանձնակատար Բրունները բարձր է գնահատել ներդրված ջանքերը՝ ՀՀ քաղաքացիների շարժունակությունը դեպի ԵՄ երկրներ ազատականացնելու ուղղությամբ եւ արձանագրել, որ հաստատուն կամքն ու ներդրվող ռեսուրսներն այս ուղղությամբ արդեն իսկ նկատելի եւ գնահատելի են: Նա համոզմունք է հայտնել, որ բարձր կատարողականով որակյալ, թիրախային եւ ժամանակին առաջընթաց գրանցելու Հայաստանի պատրաստակամությունը կհանգեցնի սպասված վերջնարդյունքին:

Նախարար Սարգսյանը հավաստիացրել է, որ Հայաստանը գնահատում է միգրացիոն հոսքերի կառավարմանը միտված ԵՄ ջանքերը եւ վիզաների ազատականացման գործընթացում հատուկ նշանակություն է տալիս ՀՀ-ից դեպի ԵՄ երկրներ ուղղված անօրինական հոսքերի կրճատմանը, գիտակցված եւ պատասխանատու միգրացիոն վարքագծի ձեւավորմանը:

Հանդիպման ավարտին նախարար Սարգսյանը երախտագիտություն է հայտնել ԵՄ-ին՝ շարունակական աջակցության եւ միայն ՀՀ-ի հետ ակտիվ բանակցային գործընթաց ունենալու համար, նա նաեւ ընդգծել է պատրաստակամությունը՝ գործնական համագործակցությունը բարձր որակով շարունակելու ուղղությամբ:

● *Անցած 1 օրում գրանցվել է 17 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 20-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՇԽԱՐՀ

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԵՆ

Արեւմտյան երկրորդ օկրուգային զինվորական դատարանում կայացվել են «Կրոկուս Սիթի Հոլի» վրա հարձակման գործով մեղադրյալների դատավճիռները, որի հետեւանքով զոհվել էր առնվազն 147 մարդ: 15 ամբաստանյալ դատապարտվել է ցմահ ազատազրկման, եւս չորսը ստացել են 19-ից 22 տարվա ազատազրկում:

Դատարանը նաեւ համաձայնել է քննության այն գնահատականի հետ, որ հարձակման չորս անմիջական մասնակիցները՝ Դալերջոն Միրզոեւը, Սաիդակրամի Ռաչաբալիզոդան, Շամսիդին Ֆարիդունին եւ Մուհամմադսոբիր Ֆայզովը, եղել են «Իսլամական պետություն-Վիլայաթ Խորասան» խմբավորման անդամներ:

Հիշեցնենք, որ 2024 թվականի մարտի 22-ի երեկոյան Մոսկվայի մերձակայքում գտնվող «Կրոկուս Սիթի Հոլ»-ում «Պիկնիկ» խմբի համերգից առաջ մի խումբ զինված անձինք ներխուժել էին շենք, անկանոն կրակ բացել մարդկանց ուղղությամբ եւ հրդեհել դահլիճը:

9 ՀԱԶԱՐ ՕԲՅԵԿՏ

Իրանի դեմ Միացյալ Նահանգների ու Իսրայելի սկսած ռազմական գործողությունների առաջին 10 օրերի ընթացքում երկրում հարձակման է ենթարկվել տարբեր նշանակության մոտ 9 հազար օբյեկտ: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով իրանական լրատվամիջոցները, տվյալները հայտնել է Թեհրանի քաղաքապետ Ալիռեզա Զաքանին:

«Պատերազմի առաջին 10 օրվա ընթացքում հակառակորդը գնդակոծել է 9 հազար օբյեկտ ամբողջ երկրում»,- նշել է Զաքանին: Նա հավելել է, որ «մայրաքաղաքում արդեն իրականացվել են փլվածքների մաքրման մեծածավալ աշխատանքներ, եւ այդ գործընթացը շարունակվում է առանց ընդհատումների»:

ՎՍՏԱՀԵՑՐԵԼ Է

Աբու Դաբիում ընթացող ուկրաինական կարգավորման բանակցությունները կշարունակվեն: Այնուամենայնիվ, ներկայումս դրանց վայրի կամ ամսաթվի վերաբերյալ որեւէ կոնկրետ տեղեկություն չկա, ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: «Ներկայումս բանակցությունների շարունակման եւ հաջորդ փուլի վերաբերյալ ճշգրիտ մանրամասներ չկան: Հենց որ ճշգրիտ տեղեկատվություն հասանելի դառնա, մենք ձեզ կտեղեկացնենք»,-նշել է նա: «Ընդհանուր առմամբ, կա փոխըմբռնում, որ բանակցային գործընթացը կշարունակվի»,-հավելել է Կրեմլի խոսնակը:

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ՄԵՂՎԻ ԵՎ ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐԱՏՈՒՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզի Վարդաբլուր գյուղում Բիոգրաֆի հյուրատանը Հայարփին իր հյուրերին բարի գալուստ է ասում հյուրատան այցեքարտը համարվող մեղրահամ ըմպելիքով: Հյուրատան տնակները մեղվափեթակների տեսքով են, որտեղ գյուղական տուրիզմի սիրահարները, հանգստանալուց բացի, կարող են իրականացնել մեղրի համտես, մասնակցել մեղրահամին:

Բիոգրաֆի հյուրատունը Ակբա ֆեդերացիայի եւ Գերմանիայի բնության պահպանության միության՝ NABU-ի «Գյուղական տուրիզմի զարգացման» ծրագրի շահառուներից է. ստացված դրամաշնորհի միջոցով ներդրվել են հատուկ էկո լուծումներ, որոնց շնորհիվ հյուրատունը ֆիլտրում է ցանկացած կեղտաջուր եւ չի աղտոտում շրջակա միջավայրը:

«Հյուրատան կառուցմամբ փորձել ենք ոչ միայն զարգացնել համայնքը, այլ նաեւ զարկ տալ զբոսաշրջության եւ համայնքի զարգացմանը: Ստեղծել ենք հանգստի հարմարավետ անկյուն, որտեղ սնունդը էկոլոգիապես մաքուր է՝ տեղական բնական պրոդուկտներից պատրաստված: Մեզ համար կարեւոր էր, որ հյուրատան գործունեությունը «խոսի» օրգանական գյուղատնտեսության հետ, այդ իսկ պատճառով սկսեցինք կիրառել կանաչ լուծումներ՝ սկսած արեւային պանելների տեղադրումից եւ ինքնաբավ դառնալու գործընթացից, վերջացրած կոյուղու մաքրման կայանի կառուցմամբ ու տեղադրմամբ, որի հարցում մեզ աջակցեց Ակբա ֆեդերացիան եւ NABU-ն: Քանի որ հյուրատունը մոտ է գետին, եւ մեզ համար կարեւոր էր, որ կեղտաջրերը, որոնք արտադրվում են մեր հյուրատանը գործունեության ընթացքում, որեւէ կերպ չվնասեն շրջակա միջավայրը»,- նշել է Բիոգրաֆի հյուրատան հիմնադիր Հայարփի Հակոբյանը:

Հայարփիի համագործակցությունը Ակբա բանկի եւ Գերմանիայի բնության պահպանության միության՝ NABU-ի հետ սկսվել է դեռ 2021-ին. նա մասնակցել է օրգանական գյուղատնտեսության աջակցման ծրագրին եւ ստացել օրգանական մեղր արտադրողի սերտիֆիկատ՝ներկայացնելով իր արտադրանքը արտերկրի շուկաներում:

Ակբա ֆեդերացիան Ակբա բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 75 տոկոս մասնաբաժին: Ակբա բանկում ունեցած մասնակցության շնորհիվ Ակբա ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու ամրապնդմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՆԴԵԼ ԵՆ



ArmLur.am-ը արձանագրեց, որ ՀՀ Հակակոռուպցիոն դատարանի բակում ստեղծվել է խայտառակ իրավիճակ:

Թեեւ ընդամենը մեկ տարի առաջ այստեղ իրականացվել էին բարեկարգման աշխատանքներ, սակայն այժմ արդեն նորից քանդվել է դատարանի բակը, տարբեր կարճ ճանապարհներ, անգամ դեպի զուգարան տանող ճանապարհը: Քանդված ճանապարհի պատճառով դատարանի աշխատակիցները հայտնվել են անհարմար դրության մեջ. զուգարան հասնելը փաստացի անհնար է դարձել. զգուշացրել են՝ չօգտվեք:

Աշխատակիցները շփոթված ու զայրացած են ստեղծված իրավիճակից, քանի որ աշխատանքային ժամերին մնացել են առանց տարրական պայմանների: Տեղում գտնվող աշխատակիցները ArmLur.am-ի հետ զրույցում նշեցին, որ ընդամենը մեկ տարի առաջ կատարված բարեկարգման աշխատանքները, փաստորեն, երկար չեն ծառայել, եւ այժմ նույն հատվածը կրկին քանդված է:

ԻՐԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է

Իրանում ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից իրականացված հարձակումների հետեւանքով զոհվել է ավելի քան 200 աշակերտ եւ ուսուցիչ, հայտարարել է Իրանի կրթության նախարար Ալիռեզա Քազեմին:

«Իրանի վրա թշնամու հարձակումների հետեւանքով զոհվել է 206 աշակերտ եւ ուսուցիչ, իսկ 161 մարդ (աշակերտներից եւ ուսուցիչներից - խմբ.) վիրավորվել է», - ասել է Քազեմին իրանական պետական լրատվական գործակալությանը:

Փետրվարի 28-ին ԱՄՆ-ն եւ Իսրայելը սկսեցին հարվածներ հասցնել Իրանում գտնվող օբյեկտներին, այդ թվում՝ Թեհրանին: Իրանի իշխանությունների տվյալներով՝ հարձակումների հետեւանքով զոհերի ընդհանուր թիվն արդեն գերազանցել է 1300-ը:

Իրանը պատասխան հարվածներ է հասցնում Իսրայելի տարածքում, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքում գտնվող ԱՄՆ ռազմական օբյեկտներին:

ՀԵՏ Է ԿԱՆՉԵԼ ԴԵՍՊԱՆԻՆ

Իսպանիայի կառավարությունը հետ է կանչել Իսրայելում իր դեսպան Անա Մարիա Սալոմոն Պերեսին, ասվում է Թագավորության արտաքին գործերի նախարարության կողմից Իսպանիայի պաշտոնական տեղեկագրում (BOE) հրապարակված հրամանագրում:

«Դոնյա Անա Մարիա Սալոմոն Պերեսին ազատել Իսրայելի Պետությունում Իսպանիայի դեսպանի պաշտոնից՝ շնորհակալություն հայտնելով նրան իր ծառայությունների համար»,-ասվում է հրամանագրում:

Փաստաթղթի համաձայն՝ որոշումը կայացվել է Իսպանիայի արտաքին գործերի նախարար Խոսե Մանուել Ալբարեսի առաջարկով՝ մարտի 10-ին նախարարների խորհրդի նիստում քննարկումներից հետո: Փաստաթուղթը ստորագրել են Իսպանիայի թագավոր Ֆելիպե VI-ը եւ արտաքին գործերի նախարար Խոսե Մանուել Ալբարեսը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԴԱՏԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՐԵԼ Է

140 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿՑԻՆ

ԱՄՆ-ում դատարանը պարտավորեցրել է ամերիկացի սկանդալային ռեփեր եւ Քիմ Քարդաշյանի նախկին ամուսին Քանյե Ուեսթին վճարել 140 հազար դոլար փոխհատուցում այն բանից հետո, երբ նրա Մալիբուի առանձնատանը աշխատած վարպետը դատական հայց էր ներկայացրել չվճարված աշխատանքի համար:



Լոս Անջելեսում անցկացված դատավարության ընթացքում վարպետ Թոնի Սաքսոնը պնդել է, որ ռեփերը իրեն պատշաճ չի վճարել Մալիբուի ծովափնյա առանձնատանը կատարված վերանորոգման աշխատանքների համար եւ հետագայում անհիմն կերպով ազատել է աշխատանքից:

Սաքսոնը դատարանից պահանջել էր 1.7 միլիոն դոլարի փոխհատուցում, սակայն դատարանը վերջնականապես որոշել է նրան վճարել 140 հազար դոլար:

Դատավարության ընթացքում վկայություն են տվել նաեւ ռեփերը եւ նրա կինը՝ Բիանկա Քենսորին: Սաքսոնը դատարանում ներկայացրել է մի շարք պնդումներ աշխատանքային պայմանների վերաբերյալ՝ նշելով, որ աշխատել է վտանգավոր պայմաններում եւ ամբողջությամբ չի ստացել խոստացված գումարը:

Վարպետի խոսքով՝ Ուեսթը խոստացել էր շաբաթական վճարել 20 հազար դոլար, սակայն նա ստացել է միայն մեկ նման վճարում եւ մեկ այլ՝ 100 հազար դոլար, որը, ըստ նրա, նախատեսված էր շինարարական ծախսերի համար:

Սաքսոնը նաեւ հայտարարել է, որ երբեմն ստիպված է եղել գիշերել առանձնատանը եւ քնել փոքրիկ ներքնակի վրա: Նրա խոսքով՝ մի անգամ Ուեսթը նրան գիշերվա ժամը 03:00-ին արթնացրել է՝ հարցնելով, թե ինչու նա չի աշխատում:

Խոսքը վերաբերում է առանձնատանը, որը նախագծել է ճապոնացի հայտնի ճարտարապետ Տադաո Անդոն: Ուեսթը այն գնել էր 2021 թվականին՝ 57 միլիոն դոլարով, սակայն վերանորոգման աշխատանքներից հետո տունը մնացել է կիսաքանդ վիճակում եւ 2023-ին վաճառվել է վնասով:

Ռեփերի պաշտպանական կողմը դատարանում պնդել է, որ Սաքսոնը չուներ շինարարական լիցենզիա եւ իրականում վնասել է շենքը: Փաստաբանները նաեւ ներկայացրել են բանկային տվյալներ, ըստ որոնց՝ վարպետը վեց շաբաթվա ընթացքում ստացել է մոտ 240 հազար դոլար:

Դատավարության ժամանակ Ուեսթը որոշ հարցերի պատասխանել է, սակայն նշել է, որ չի հիշում Սաքսոնի ներկայացրած շատ դեպքեր: Մեդիայի փոխանցմամբ՝ նա նույնիսկ մի պահ քնել է դատարանում, թեեւ նրա փաստաբանը հայտարարել է, որ ռեփերը պարզապես ձանձրացել էր:

Նշվում է, որ սա առաջին դատական գործն է, որը հասել է դատավարության՝ ռեփերի նախկին աշխատակիցների ներկայացրած ավելի քան տասնյակ հայցերից:

Վերջին տարիներին Քանյե Ուեսթը հայտնվել է մի շարք սկանդալների կենտրոնում՝ սոցիալական ցանցերում իր ռասիստական եւ հակասեմական հայտարարությունների պատճառով, ինչի հետեւանքով բազմաթիվ բրենդներ դադարեցրել են համագործակցությունը նրա հետ:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՉԿԱ

Հայտնի մարզական լրագրող եւ ինսայդեր Մատեո Մորետոն ուշագրավ տեղեկություններ է հայտնել Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի ապագայի վերաբերյալ:

Ըստ աղբյուրի՝ հայ ֆուտբոլիստի՝ հաջորդ մրցաշրջանում միլանյան ակումբում մնալու հարցը դեռեւս հաստատված չէ: Կողմերը վերջնական որոշում չեն կայացրել եւ պայմանագրի երկարաձգման կամ հնարավոր հեռանալու հարցին լրջորեն կանդրադառնան միայն մրցաշրջանի ավարտին: Ընդ որում, քննարկվում է նաեւ կարիերան ավարտելու տարբերակը:

Մորետոն հրապարակել է հայ ֆուտբոլիստի վերաբերյալ իր ունեցած տեղեկությունները՝ մակագրելով այն հետեւյալ կերպ. «Մխիթարյանը դեռ վստահ չէ, որ հաջորդ տարի կմնա «Ինտերում»: Վերջնական որոշում դեռ կայացված չէ, կողմերն այն լրջորեն կքննարկեն մրցաշրջանի վերջում: Սակայն այս պահի դրությամբ դա ավելի շատ կապված է նրա հետ, թե ինչ է ցանկանում անել անձամբ Մխիթարյանը, որը նույնիսկ դիտարկում է խաղակոշիկները մեխից կախելու հավանականությունը: Ուշադրություն, Մխիթարյանի ապագան «Ինտերում» դեռ որոշված չէ, եւ կողմերը կքննարկեն այն մրցաշրջանի ավարտին»,-Մորետոյի խոսքերն է մեջբերում fcinter1908.it-ը:

Սակայն իտալական մամուլում շրջանառվող այս պնդումները որոշակիորեն հակասում են այն մտքերին, որոնք անձամբ ֆուտբոլիստն արտահայտել էր այս լուրերից դեռեւս երկու շաբաթ առաջ: Միլանի Բոկոնիի հեղինակավոր համալսարանում ուսանողների հետ կայացած հանդիպման ժամանակ 37-ամյա կիսապաշտպանը բավականին հստակ էր խոսել իր ապագայի ու կարիերայի հնարավոր ավարտի մասին. «Ես դեռ մտադիր եմ խաղալ եւ անգամ չեմ մտածել կարիերաս ավարտելու մասին: Իհարկե, ես 37 տարեկան եմ, եւ այժմ պետք է շատ ավելի ճիշտ կառավարել մարմինը. ես այլեւս 20 կամ 22 տարեկան չեմ: Սակայն ես փորձում եմ տալ իմ առավելագույնը, որպեսզի հնարավորինս երկար մնամ խաղադաշտում եւ հետագայում ոչ մի բանի համար չափսոսամ»,-նշել էր Մխիթարյանը:

Ստացվում է բավականին հետաքրքիր իրավիճակ. մինչ ինսայդերները նշում են, որ խաղացողը դիտարկում է կարիերան ավարտելու տարբերակը, Մխիթարյանն ավելի վաղ վստահեցրել էր, որ նման մտադրություն դեռ չունի եւ ցանկանում է շարունակել ելույթները Քրիստիան Կիվուի գլխավորած թիմում:

Թե որքանով են հավաստի իտալական աղբյուրների պնդումները, եւ ինչ վերջնական որոշում կկայացնեն կողմերը, պարզ կդառնա միայն մրցաշրջանի ավարտին:

ԱՇԽԱՐՀ

ԿՈՒԺԵՂԱՑՎԻ

2026 թվականի Academy Awards մրցանակաբաշխության ժամանակ կուժեղացվի անվտանգության մակարդակը՝ այն բանից հետո, երբ ԱՄՆ Դաշնային հետաքննությունների բյուրոն զգուշացրել է Իրանի կողմից Կալիֆոռնիայի վրա հնարավոր անակնկալ հարձակման մասին:

Միջոցառման կազմակերպիչների խոսքով՝ Հոլիվուդի ամենախոշոր կինոմրցանակաբաշխությունը, որը տեղի է ունենալու Լոս Անջելեսի Dolby Theatre-ում, կիրակի օրը կանցկացվի անվտանգության ուժեղացված պայմաններում:

Մրցանակաբաշխության հեռարձակման գործադիր պրոդյուսերներ Raj Kapoor-ը եւ Katy Mullan-ը հայտարարել են, որ աշխատում են անվտանգության մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

«Մենք աջակցություն ենք ստանում ՖԲՀ-ից եւ Լոս Անջելեսի ոստիկանությունից, եւ կա սերտ համագործակցություն: Մենք ցանկանում ենք, որ այս միջոցառմանը եկող յուրաքանչյուր մարդ իրեն անվտանգ եւ պաշտպանված զգա»,- նշել է Կապուրը:

Լոս Անջելեսի շրջանի ոստիկանության վարչությունը եւս հայտարարել է, որ ներկայիս միջազգային իրավիճակի ֆոնին պահպանվում է բարձր պատրաստականության մակարդակ: Իրավապահները նշել են, որ աշխատում են դաշնային եւ տեղական գործընկերների հետ՝ տեղեկատվություն փոխանակելու եւ հնարավոր սպառնալիքները վերահսկելու համար:

Ամերիկյան լրատվամիջոցների փոխանցմամբ՝ Federal Bureau of Investigation-ն վերջերս զգուշացրել է Կալիֆոռնիայի իրավապահ մարմիններին, որ Իրանը կարող է փորձել անօդաչու թռչող սարքերի միջոցով հարձակվել ԱՄՆ տարածքի վրա՝ հնարավոր պատասխան քայլի շրջանակում:

Զգուշացման մեջ նշվել է, որ Իրանը կարող է փորձել անակնկալ հարձակում իրականացնել ԱՄՆ ափերի մոտ գտնվող անհայտ նավից արձակվող անօդաչու սարքերի միջոցով՝ Կալիֆոռնիայում գտնվող թիրախների դեմ, եթե ԱՄՆ-ը ռազմական հարվածներ հասցնի Իրանի դեմ: Սակայն փաստաթղթում նշվում է, որ հարձակման հնարավոր ժամանակի, մեթոդի կամ կոնկրետ թիրախների մասին լրացուցիչ տվյալներ չկան:

Gavin Newsom-ը հայտարարել է, որ նահանգի իշխանությունները մշտական կապի մեջ են անվտանգության եւ հետախուզական մարմինների հետ եւ հետեւում են հնարավոր սպառնալիքներին:

Վերջին լարվածությունը կապված է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ սրված իրավիճակի հետ:

ՔԵՅԹ ՈՒԻՆՍԼԵԹԸ ԿՄԻԱՆԱ

Օսկարակիր դերասանուհի Քեյթ Ուինսլեթը պատրաստվում է միանալ «Մատանիների տիրակալը» կինոշարքին: Նա բանակցություններ է վարում նոր ֆիլմում «Մատանիների տիրակալը. Գոլլումի որսը», դերակատարություն ունենալու համար:

Ֆիլմի ռեժիսորը Էնդի Սերքիսն է, ով նաեւ կրկին մարմնավորելու է Գոլլումի կերպարը: Այդ կերպարը նա առաջին անգամ ստեղծել էր «Մատանիների տիրակալը» ֆիլմաշարում 2000-ականների սկզբին եւ հետագայում վերադարձել էր դրան նաեւ «Հոբիթը. Անսպասելի ճանապարհորդություն» ֆիլմում: Ուինսլեթի դերի մասին մանրամասներ առայժմ չեն հրապարակվում:



Նոր ֆիլմի գործողությունները տեղի են ունենալու Հոբիթի եւ Մատանիների տիրակալի միջեւ ընկած ժամանակահատվածում: Սյուժեի համաձայն՝ Արագորնը եւ Գենդալֆը որոնում են Գոլլումին՝ ավելի շատ տեղեկություն ստանալու Բիլբոյի մատանու մասին, որը հետագայում պարզվում է՝ Մեկ Մատանին է, որը սպառնում է ողջ Միջերկրին:

Ֆիլմի պրոդյուսերական կազմում ներգրավված է նաեւ Փիթեր Ջեքսոնը՝ Ֆրան Ուոլշի եւ Ֆիլիպա Բոյենսի հետ միասին: Նախագիծը նախատեսվում է թողարկել 2027 թվականի դեկտեմբերի 17-ին՝ «Ուորներ Բրազերսի» կողմից:

Ակնկալվում է, որ ֆիլմում կվերադառնա նաեւ Յան Մաքքելենը՝ Գենդալֆի դերում, իսկ Էլայջա Վուդը ակնարկել է, որ կարող է կրկին մարմնավորել Ֆրոդոյին:

Քեյթ Ուինսլեթը յոթ անգամ առաջադրվել է «Օսկար» մրցանակի եւ 2009 թվականին արժանացել է մրցանակի «Ընթերցողը» ֆիլմում խաղացած դերի համար: Վերջին անգամ նա էկրանին երեւացել է Ջեյմս Քեմերոնի «Ավատար. Կրակ եւ մոխիր» ֆիլմում Ռոնալի դերում:

● *Մարտի 13-ին Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000 - 5000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանում է, թե ոչ:

Մնի Սահակյան, 22 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այսինքն՝ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կարելի՞ է իմանալ, թե ինչպես մարել անձի վարկային պատմությունը:

Արա Մխոյան, 29 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ այսպես կոչված «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր:

Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է:

(«Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը «Ժողովուրդ» օրաթերթի

ԱԱԾ շենքի մոտ շարունակվում է ուժեղացված ծառայությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 6 - 10 + 2 + 5
	Կոտայքի լեռներ	- 6 - 9 + 2 + 5
	Կոտայքի նախալեռներ	0 - 3 + 6 + 10
	Գեղարքունիք	- 6 - 10 + 1 + 4
	Լոռի	0 - 3 + 2 + 6
	Տավուշ	0 - 2 + 3 + 7
	Արագածոտնի լեռներ	- 6 - 10 + 2 + 5
	Արագածոտնի նախալեռներ	- 1 - 5 + 6 + 10

	Արարատ	- 1 - 3 + 8 + 11
	Արմավիր	0 - 2 +10 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 7 - 10 + 2 + 5
	Վայոց ձորի նախալեռներ	0 - 3 +10 + 13
	Սյունիքի լեռներ	- 7 - 10 0 - 2
	Սյունիքի նախալեռներ	- 1 - 4 + 1 + 5
	Սյունիքի հովիտներ	+ 1 + 4 + 8 + 12
	Երեւան	0 - 2 + 8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*